

**2020թ-ին Լոռու մարզում նախատեսված ճանապարհաշինական
ծրագրերն են**

1. **Մ6, Վանաձոր - Ալավերդի - Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքների երկրորդ փուլ:** Ծրագրի արժեքը՝ **8.742 մլրդ դրամ:** Կապալառու կազմակերպություններն են «Հորիզոն-95» ՍՊԸ, «ԱԱԲ ՊՐՈՅԵԿՏ» ՍՊԸ և «Սուարդի» ԲԸ հայաստանյան մասնաճյուղ իտալական կազմակերպությունը: Ծրագիրն իրականացվում է Եվրոպական ներդրումային և Ասիական զարգացման բանկերի ֆինանսավորմամբ և ՀՀ պետ. բյուջեի համաֆինանսավորմամբ: Աշխատանքներն ընթացքի մեջ են. ներկայումս ընթանում են ճանապարհի լայնացման, ճանապարհային պաստառի պրոֆիլի բերման, ծածկույթի մասնակի քանդման, հիմնատակի կառուցման և ներքին շերտի ասֆալտապատման աշխատանքներ: Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է **51.74 կմ**, որից **38.41 կմ՝** Լոռու մարզում:

ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պարվիրարվությամբ նախատեսված ծրագրերն են.

2. **Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ112+900-կմ116+900 հատվածի հիմնանորոգում:** Պայմանագրային արժեքը՝ **505.0 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **4.0 կմ:**
3. **Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման կմ127+900-կմ130+400 հատվածի հիմնանորոգում:** Պայմանագրային արժեքը՝ **371.9 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **2.5 կմ:**
4. **Մ-7, Մ-3 - Սպիտակ - Գյումրի - Թուրքիայի սահման կմ0+000- կմ19+000 հատվածի հիմնանորոգում:** Լոռու մարզի տարածքում իրականացվող աշխատանքների ծրագրային արժեքը՝ **672.0 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **19.0 կմ:**
5. **Մ-7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման կմ19+000-կմ27+000 հատվածի հիմնանորոգում:** Պայմանագրային արժեքը՝ **435.0 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **8.0 կմ:**

6. **Մ-8, Վանաձոր (Մ-6 հատման կետ) - Դիլիջան կմ33+500-կմ34+200 հատվածի հիմնանորոգում:** Լոռու մարզի տարածքում իրականացվող աշխատանքների ծրագրային արժեքը՝ **99.7 մլն դրամ**, հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **0.7 կմ:**
7. **Հ-25, Մ6-Հաղպատի հուշարձան կմ0+000-կմ5+000 հատվածի հիմնանորոգում:** Կապալառու կազմակերպությունն է «Ճանապարհ» ՍՊԸ: Պայմանագրային արժեքը՝ **323.4 մլն դրամ:** Պատվիրատու՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն: Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **5.0կմ:**
8. **Հ31, /Մ-1/ - Վարդաղբյուր - Տաշիր - /Մ-3/ ավտոճանապարհի կմ35+300 - կմ45+300 հատվածի հիմնանորոգում (Մ-3՝ միջպետական նշանակության ճանապարհից մինչև Բլագոդարնոյե-Մեդվահովիտ խաչմերուկ):** Պայմանագրային արժեքը՝ **1.0 մլրդ դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **10.0 կմ:**
9. **Հ34, Մ3-Սրբեփանավան-Պրիվոլնոյե-Վրաստանի սահման կմ 5+000 - կմ 18+000 հատվածի հիմնանորոգում (Ուռուր համայնքի խաչմերուկից Սվերդլով և Պրիվոլնոյե համայնքներով մինչև առաջին սահմանային անցակետ):** Պայմանագրային արժեքը՝ **1134.6 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **13.0 կմ:**
10. **Տ-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ)- Լեջան-/Հ-33/ կմ 0+000-կմ 3+800 հատվածի հիմնանորոգում:** Պայմանագրային արժեքը՝ **271.9 մլն դրամ:** Հիմնանորոգվող հատվածի երկարությունը կազմում է **3.8 կմ:**
- Լոռու մարզպետարանին** մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանման և շահագործման համար 2020թ-ին պետ. բյուջեից հատկացվել է **125,562 մլն դրամ**, որից ընթացիկ ձմեռային պահպանման համար՝ **46.45 մլն դրամ**, ընթացիկ ամառային պահպանման համար՝ **79.112 մլն դրամ:**